Սակայն որո՞նք են շարժառիթները: Հետագայ տեղեկութիւններից մեզ յայտնի է, որ Հայոց հայրապետը Կեսարիայում ձեռնադրուելու համար պէտք է ուներ Փոքր Հայքի եպիսկոպոսների երաշխաւորական նամակները[196]: Յունական վարքի խմբագիրը թերեւս փորձել է այդ հանգամանքն արտացոլել յիշեալ հատուածում:

Վերջում նշենք, որ Հ. Պ. Անանեանն անդրադարձել է նաեւ Հռիփսիմեան կոյսերի Հայաստան գալու ժամանակին, որը նա համարում է 313 թուականը եւ հակուած է կարծելու, թէ իր առաջարկած թուագրումը մեծ նպաստ է բերելու հարցի լուսաբանութեանը[197]: Այս խնդրի մասին մենք խօսեցինք վերեւում, ուստի, այնուամենայնիւ, մտադիր չենք նրան ի նորոյ անդրադառնալ: Տեղին յիշենք միայն, որ տարիներ առաջ Վաղարշապատի Ս. Հռիփսիմէ եկեղեցու հարեւանութեամբ կատարուած պեղումները ի յայտ բերեցին, այսպէս կոչուած, քոյրական գերեզմանոց, որը ոչ մի կասկած չի թողնում, որ Հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնը ոչ թէ առասպել է, այլ իրականութիւն, ուստի եւ հազիւ թէ կարելի է լրջօրէն քննարկել Մ. Աբեղեանի այն տեսակէտը, թէ՝ «Դժուար է թէ որեւէ իրական պատմական բան լինի, բայց եթէ այն, որ իրօք Վաղարշապատում նահատակուած են եղել կոյսեր»[198]:

Մենք փորձեցինք համակողմանիօրէն քննարկել Մեծ Հայքի թագաւորութիւնում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման խնդիրը: Եզրակացութիւնը միանշանակ է. քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուեց պետական կրօն 305 թ. մայիսից յետոյ ընկած շրջանում, ամենայն հաւանականութեամբ, ամռանը:

196 Կասկած չկայ, որ որոշակի շարժառիթներով Փոքր Հայքի եպիսկոպոսներին նման իրաւունք վերապահել էր Կեսարիայի մետրոպոլիտը, քանի որ նա՝ մի կողմից օրինականութիւն էր հաղորդում ձեռնադրութեանը, իսկ միւս կողմից՝ մետրոպոլտի եւ կայսեր անհամաձայնութեան դէպքում Փոքր Հայքի ոչ մի եպիսկոպոս կաթողիկոսական թեկնածուին երբեք երաշխաւորական նամակ չէր տայ:

197 **Հ. Պ. Անանեան**, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը...*, էջ 175

198 **Մ. Աբեղեան**, *Հայոց հին գրականութեան պատմութիւն*, հտ. Ա, Երեւան, էջ 172

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Յակոբ Յարութիւնեան

Արշակունեաց Հայաստանի վարչատարածքային հարցերի ուսումնասիրութիւնը եղել եւ այժմ էլ մնում է հայագիտութեան կարեւորագոյն խնդիրներից մէկը: Նրանով զբաղուել են մի շարք նշանաւոր հայագէտներ, որոնց թւում են Հ. Ղ. Ինճիճեանը, Հ. Հիւբշմանը, Ե. Մարկուարտը, Ք. Պատկանեանը, Յ. Մանանդեանը, Ս. Երեմեանը եւ Բ. Յարութիւնեանը, որոնք կատարել են կարեւոր եւ ուշագրաւ ուսումնասիրութիւններ այդ խնդրի տարբեր տեսանկիւնների շուրջ[1]: Լուծումների համար գլխաւորապէս հիմք են ընդունում մեր մատենագիրներից Անանիա Շիրակացու (կամ, ըստ ուրիշների, Մովսէս Խորենացու) «Աշխարհացոյց»-ի տուեալները որին շատ դէպքերում՝ լրացնելու է գալիս Փաւստոս Բուզանդն՝ իր «Հայոց պատմութեամբ», երբ խօսք է գնում Դ. դարի վերաբերեալ: Ներկայ աշխատանքում մենք հանգամանօրէն կ'անդրադառնանք Դ. դարի Արշակունեաց Հայաստանի պետական եւ երկրի ներսում գոյութիւն ունեցած վարչատարածքային սահմանների արծարծման խնդրին:

Երբ ամենայն մանրամասնութեամբ զննում ենք Բուզանդի երկասիրութիւնը՝ «Հայոց պատմութիւնը», ապա միանգամից աչքի է զարնում մի օրինաչափութիւն: Պատմիչն առաւել շատ ուշադրութիւն է յատկացնում երկրի չորս կողմերից երկուսին՝ արեւմուտքին եւ յատկապէս հարաւին, որն առաջնակարգ դեր եւ նշանակութիւն ունէր: Իսկ ի՞նչ հանգամանքով է դա պայմանաւորուած: Մեր կարծիքով՝ պատասխանն առաւել քան պարզ է եւ յստակ. երկրի չորս կողմերից ամենաանհանգիստը, ինչպէս ցոյց է տուել պատմութեան ողջ ընթացքը, հանդիսացել է հարաւը, հակառակ որին արեւելքն աչքի է ընկել յարաբերական հանգստութեամբ, իսկ հիւսիսն ու արեւմուտքը այս երկուսի միջեւ զբաղեցրել են միջանկեալ դիրք: Վերջին երկուսից դժուար է որեւէ մէկին նախապատուութիւն տալը, բայց այս դատողութիւնների լաւագոյն փաստարկ կարող է հանդիսանալ Արտաշէս Ա արքայի կողմից (Ք. ա. 189-160 թթ.) Մեծ Հայքը միաւորելու ընթացքում վարած քաղաքականութիւնը: Այդ միաւորումը, ինչպէս յայտնի է, նա սկսեց արեւելքից, ապա շարժուեց հիւսիս: Ողջ այս ընթացքում Հայոց արքան հետապնդում էր մէկ հիմնական նպատակ, այն է՝ ստեղծել իր համար պլացդարմ (մարտայենադաշտ, ռազմայենադաշտ)՝ դէպի արեւմուտք եւ հարաւ արշաւելու համար: Արեւմուտքում գտնւում էր դէպի արեւելք ձգտող Հռոմէական հանրապետութիւնը, իսկ հարաւում հոգեվարք ապրող Սելեւկեաններն էին: Արտա-

1 **Ղ. Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի*, հտ. Գ, Վենետիկ, 1835. **Հ. Հիւբշման**, *Հին հայոց տեղւոյ անունները*, թարգ. Հ. Բ. Պիլէգիկեանի, Վիեննա, 1907. **Jos. Markwart**, *Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen*, Wien, 1930. **К. Патканов**, *Армянская география VII-го века по р. Хр.*, СПб, 1877. **Я. А. Манандян**, *Когда и кем была составлена «Армянская география», приписываемая Моисею Хоренскому,-* "Византийский временник", М.,1947, сс. 127-143. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963. **Բ. Ց. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, մաս Ա (արեւմտեան եւ հարաւային աշխարհներ), Եր., 2001:

© National Library of Armenia

չէսը հաստատ զգում էր, որ վերջինս այնուհանդերձ պայքարելու է, իսկ Հռոմի հետ փոխյարաբերութիւնները դեռ անորոշ էին (ըստ Ստրաբոնի)[2]:

Նոյնպիսի, եթէ ոչ առաւել վատթար, պայթիւնավտանգ իրավիճակ Արշակունեաց Հայաստանում ստեղծուել էր Պապի (368-374 թթ.) գահակալութեան սկզբին: Տարբերութիւնը նրանում էր, որ Արտաշէսը պայքարելու էր միայն արտաքին թշնամիների, իսկ Պապը՝ թէ՛ ներքին, թէ՛ արտաքին հակառակորդի դէմ՝ ի դէմս Սասանեանների: Մի շարք նախարարութիւններ ապստամբել էին կենտրոնական իշխանութեան դէմ եւ իրենց հռչակել անկախ: Եթէ ուշադիր հետեւում ենք, ըստ Բուզանդի, Պապի կողմից Արշակունեաց Հայաստանի տարածքային ամբողջականութեան վերականգման ծրագրին, ապա աչքի են զարնում երկու օրինաչափութիւն: Առաջին՝ միաւորուել են երկրի արեւելքում (այդ թւում՝ հիւսիս-արեւելքում եւ հարաւ-արեւելքում) գտնուող իշխանութիւնները, երկրորդ՝ հնազանդեցուել են բդեշխութիւնները: Համաձայն Փաւստոսի՝ Հայոց բանակը Մուշեղ սպարապետի հրամանատարութեամբ ճնշել է ապստամբութիւնները Ատրպատականում, Նոշիրականում, Մարաց կողմերում, Աղուանքի սահմաններում, Կասպից երկրի սահմաններում[3]: Դրան յաջորդել է, ինչպէս մատնանշեցինք վերեւում, բդեշխութիւնների սանձահարումը, որոնցից Նոր Շիրականը (այն հարաւ-արեւելքում էր) եւ Կորդուքը (նրանից արեւելք, այստեղով պարսից զօրքերը մշտապէս ներխուժում էին Հայաստան), արդէն հնազանդեցուել էին, եւ մնացել էին Գուգարքն ու Աղձնիքը[4]: Պապն իրեն ենթարկեց նաեւ նրանց:

Վերամիաւորման այս ցանկում առանձնանում է մի կարեւոր «օրինաչափութիւն» եւս:

Մենք նշեցինք, որ Արտաշէսը նախ արշաւել է արեւմուտք, ապա հարաւ, իսկ Պապը, հակառակ նրան, սկզբում կարգաւորել է իր գործերը հարաւում, իսկ ամենավերջում իրեն է ենթարկել Մեծ Ծոփքը, Անգեղ տունը եւ Անձիտը, որոնք բոլորն էլ հարաւում էին[5]: Ինչով էր պայմանաւորուած այսպիսի քաղաքականութիւնը: Արտաշէսը լիովին համոզուած չէր Հռոմի բարեկամութեան եւ բարեացակամութեան խնդրում: Այդ ժամանակներից յետոյ հոսել էին շատ ջրեր եւ այժմ (Պապի օրօք)՝ մ. թ. Դ. դ. կայսրութեանն անհրաժեշտ էր միասնական եւ ուժեղ Հայաստանի առկայութիւնը, որը լինելու էր յենակէտ՝ Սասանեանների դէմ պայքարում: Հէնց սա էր պատճառը, որ Հռոմը մ. թ. Ա. դ. սկսած (երբ իշխում էին պարթեւները) հրաժարուեց Հայաստանը պրովինցիա հռչակելու մտադրութիւնից, այն դէպքում, երբ հռոմէացիները պրովինցիալ քաղաքականութեան մէջ ձեռք էին բերել մեծ հմտութիւն եւ վարպետութիւն:

Մանրամասն նկարագրելով Արտաշէսեան Հայաստանի վերամիաւորումը՝

2 Արտաշէսի՝ չորս ուղղութիւններով կատարած արշաւանքների վերաբերեալ մանրամասն վկայում է յոյն պատմիչ-աշխարհագրագէտ Ստրաբոնը: Տե՛ս *The Geography of Strabo*, London, 1960, XI , 14, 5: Նրան որոշ չափով լրացնելու է գալիս Խորենացին (Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը եւ ներած. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Սարգսեանի, Եր. 1991, Բ, ծգ): Արտաշէս 1-ի վերամիաւորիչ գործունէութեանը անդրադարձել են շատերը (օրինակ՝ տե՛ս **Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, սկզբից մինչեւ Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. թ.)*,- Երկեր, հտ. Ա, Եր., 1977, էջ 118-124. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, *Հայաստանը նախնադարեան-համայնական եւ ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում*, խմբ. Ս. Տ. Երեմեանի, Եր., 1971, էջ 526-534 (հեղ.՝ Գ. Խ. Սարգսեան):

3 Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, Ե, ը-ժդ

4 Տե՛ս անդ, Ե, թ, ժ, ժե,ժզ

5 Անդ, Ե, ժէ, ժը, ժթ

Ստրաբոնը Հայաստանը յիշատակելիս շատ քիչ է օգտագործում վարչատարածքային բաժանմանը վերաբերող յատուկ տերմիններ (ինչպէս վարուել է օրինակ Պլինիոս Աւագը՝ ստրատեգիա կամ պրեֆեկտուրա) եւ պարզապէս թուարկում է մի քանի անգամ «եպարխիա» կոչուած գաւառներ: Եթէ այլ երկրների վերաբերեալ Ստրաբոնն օգտագործում է սֆրագիա (նշանակում է «կնիք»), եպարխիա եւ այլն, ապա Մեծ Հայքի կապակցութեամբ՝ աւելի շատ՝ ten peri tin (շրջակայքը), merae (մասեր) եւ նմանատիպ այլ արտայայտութիւններ: Փաւստոսի աշխատութիւնը հեղեղուած է վարչական բաժանմանը վերաբերող տերմիններով, որոնցից են՝ Հայոց (մեծ) աշխարհ, նահանգ, (կողմերի) գաւառ, (գիւղի) սահման, եկեղեցու տարածքի սահման, հայրենի հողի սահման, բաժանման սահման, բդեշխ(ութիւն)... Սակայն նրա մօտ երբեմն առկայ է յախուռն եւ խառնաշփոթ շարադրանք: Պատմիչն, օրինակ, Ծոփքը անուանում է թ՛ւ նահանգ, թ՛ւ գաւառ, չնայած որ նա տեղեակ է երկու Ծոփքերի (նաեւ Շահունեացի) գոյութեանը[6]: Յատկապէս մանրամասն են նրա վկայութիւնները հարաւում տեղակայուած Աղձնիք եւ Կորդուք (Կորճայք) նահանգների վերաբերեալ: Հարաւային սահմանների անվտանգութեան կապակցութեամբ նա գրում է. «պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց, ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչեւ ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր...»[7]: Թէ ինչպէս էր անցնելու այդ դեմարկացիոն բաժանարար գիծը, գիտէր նրա հեղինակը՝ Մուշեղ սպարապետը: Չի բացառուում նաեւ Բուզանդի իրազեկութիւնը, սակայն նա երեւի ինչ-ինչ պատճառներով աննպատակայարմար է համարել դրա մանրամասն լուսաբանումը:

Բուզանդը Մեծ Հայքի բոլոր նահանգներից առաւել յաճախակի անդրադառնում է Այրարատին (երբեմն կոչելով նաեւ գաւառ), իսկ բացարձակապէս լռում է Ուտիք, Բարձր Հայք եւ որոշ այլ նահանգների կապակցութեամբ: Երբեմն, չխօսելով որեւէ նահանգի, ինչպէս օրինակ՝ Պարսկահայքի մասին, նա յիշատակում է նրա կազմում գտնուող Զարաւանդ գաւառը[8]: Մենք այստեղ նպատակ չունենք թուարկելու բոլոր այն գաւառների անունները (դրանց թիւը Փաւստոսի մօտ անցնում է 30-ից), որոնց նա անդրադառնում է, բայց դրանք ընդգրկում են երկրի բոլոր շրջանները՝ սկսած Սպեր, Անձիտ, Անգեղ տուն, Բասեն, Դարանաղի, Եկեղիք, Կարին եւ այլ գաւառներից արեւմուտքում, մինչեւ Փայտակարան քաղաքը (Կասպերի կամ Կասպից երկրում, որը նոյնանուն նահանգն է), Նոր Շիրականը, Հերը, Զարաւանդը եւ Ուտիքի Շակաշէնը՝ արեւելքում: Նոյն կերպ հիւսիսում նշուած են Տայքն ու Գուգարքը, իսկ հարաւում, նահանգներից զատ (որոնց մասին մենք խօսեցինք վերեւում), նաեւ Տմորիք, Կորդրիք եւ այլ գաւառները:

Այժմ մեզ անհրաժեշտ է Փաւստոսի վերոյիշեալ բոլոր վկայութիւնները բերել ընդհանուր յայտարարի: Շարադրանքից պարզ երեւում է, որ Դ. դ. Մեծ Հայքի սահմաններն արեւելքում տարածուել են մինչեւ Կասպից ծով, ինչպէս եւ Արտաշէ-

6 Նոյն տեղում, Գ, բ, Դ, իդ: Ծոփքերի խնդիրը ամենայն մանրամասնութեամբ պարզաբանուած է Բ. Ց. Յարութիւնեանի կողմից (Տե՛ս Բ. Ց. Յարութիւնեան, *Մեծ Հայքի թագաւորութեան հարաւարեւմտեան երկրամասերի վարչաքաղաքական կացութիւնը III դարի վերջին եւ IV դարի սկզբին*,- ԲԵՀ, 1982, թիւ 2, էջ 89, նաեւ նոյնի՝ *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 114-115, passim):

7 **Փաւստոս Բուզանդ**, Ե, լդ, (ՄՀ, հտ. Ա, էջ 403)

8 Նոյն տեղում, Գ, ը

© National Library of Armenia

սի օրօք էր: Նոյն կերպ համարեա ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում հիւսիսային սահմանների ուրուագծումը Կուր գետով: Իր «Պատմութեան» ամենասկզբում մազքութների Սանեսան արքայի՝ հայկական արշաւանքին անդրադառնալիս Բուզանդը գրում է. «Եկն (Սանեսանը - Յ. Յ.) անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին»[9]: Այս մասին վկայում է նաեւ Խորենացին, բայց չափազանց անորոշ՝ գրելով. «...բնակիչք հիւսիսոյ Կաւկասու...»[10]:

Արեւմտեան սահմանի վերաբերեալ Փաւստոսը խօսում է Հռոմին հարեւան մի շարք գաւառների կապակցութեամբ, որոնք 387 թ. Մեծ Հայքի պետութեան առաջին բաժանումից յետոյ անցան կայսրութեանը: Խօսքը 11 գաւառների եւ սատրապութիւնների մասին է: Իրավիճակը կրկին կը մնար անհասկանալի եւ «չվերծանուած», եթէ այս անգամ օգնութեան չգային Խորենացին եւ հռոմէացի մատենագիր Ամմիանոս Մարկելլինոսը: Երբ Խորենացին խօսում է Վաղարշակ արքայի մասին, ապա Բագրատի նշանակման վերաբերեալ գրում է. «Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիւրոց եւ հազարաց, յարեւմտից կուսէ»[11]: Սա եւս մնում է անորոշ, եւ համարեա թէ ոչինչ չի տալիս նաեւ յաջորդ գլուխներից մէկը, որը Պատմահայրը վերնագրել է «Եթէ որպէս կարգեաց Վաղարշակ զարեւմուտս եւ զհիւսիսի մերոց աշխարհիս»: Աւելի ուշ նա նշում է, որ նոյն Վաղարշակը Տորքին «...հաստատէ կուսակալ արեւմտից...», եւ այդ պատճառով էլ տարածքը կոչուել է Անգեղ տուն[12]: Այն գտնւում է Աղձնիքի արեւմուտքում՝ Եփրատի ափին: Ինչպէս վկայում է Ամմիանոսը, երբ Պապը փախել է Տարսոնից եւ վերադարձել հայրենիք, ապա հայ-հռոմէական սահմանագիծ է եղել Եփրատը[13]: Հարաւ-արեւմուտքում սահմանն անցել է Ծոփքով, որը Մեծ Հայքն անջատել է Հայոց Միջագետքից: Արեւմուտքում եւս այն անցել է Եփրատով, որտեղ Մեծ Ծոփքից հիւսիս Բարձր Հայքն է: Որ Եփրատն այս մասում իր ողջ հոսանքի երկարութեամբ սահմանագիծ է եղել, վկայում են ե՛ւ Ստրաբոնը, ե՛ւ Շիրակացին (նրանից եօթ դար անց)[14]: Այս երկու նշանաւոր գործիչների միջեւ ընկած ժամանակաշրջանում է ստեղծագործել Փաւստոսը, որը վկայում է, որ Վաղես կայսրից (364-378 թթ.) դժգոհ Արշակ Բ-ն հրամայել է Վասակ սպարապետին. «..հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յԱնկուրացւոց...»[15]: Եփրատի արեւմուտքում գտնուող Կապադովկիան այս

9 Նոյն տեղում, Գ, է

10 **Խորենացի**, Գ, թ: Սանեսանի այս արշաւանքի հանգամանալից քննարկումը տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մազքթաց Սանեսան թագաւորի արշաւանքը Հայաստան*,- ԼՀԳ, 1981, թիւ 6, էջ 65-77: Հայաստանի հիւսիսային սահմանների մասին մանրամասն տե՛ս **Ա. Ա. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, сс. 90-96.

11 **Խորենացի**, Բ, գ

12 Նոյն տեղում, Բ, ը

13 **Ammiani Marcellini Rerum Gestarum**, *Libri Qui Supersunt*, v. II, London, 1963, XXX, 1, 8

14 **Strabo**, XII, 3,38, XI,14,1: Տե՛ս նաեւ **Ս. Տ. Երեմեան**, ՆՀ. աշխ, էջ 100, 105: Այստեղ տե՛ս Յաւելուած Ա - «Աշխարհացոյց»-ի՝ Մեծ Հայքի եւ հարեւան երկրների քարտէզը պարունակող ընդարձակ բնագրի գլուխները (փորձ բնագրի վերականգման), որտեղ «Առաջին Հայքի մասին», «Կապադովկեան Պոնտոսի մասին», «Մեծ Հայքի մասին» գլուխներում Եփրատը նշուած է որպէս հայ-կապադովկեան սահմանագիծ: Այդ սահմանն անցել է Բարձր Հայքի Աղիւն, Դարանաղի եւ Ծոփքի՝ Դեգիք, Գաւրէք գաւառներով, ապա Անձիտի վրայով ձգուել դէպի արեւելք (մանրամասն տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն...*, էջ 61-64, 129-131, ինչպէս նաեւ **Յ. Ժ. Յարութիւնեան**, *Ծոփքը եւ Ծոփքի թագաւորութիւնը ըստ Ստրաբոնի «Աշխարհագրութեան»*,- ԲԵՀ, 1996, թիւ 1, էջ 67-74):

15 **Փաւստոս**, Դ, ժա

ժամանակ ինչ-որ տեղ պայմանական տեղանուն էր, քանզի մ. թ. 17 թ. այն արդէն նուաճուել էր հռոմէական կայսր Տիբերիոսի կողմից (14-37 թթ.) եւ այդ ժամանակից վերածուել պրովինցիայի: Նոյնիսկ երկրի մայրաքաղաք Մաժաքը, ի պատիւ Օգոստոսի, վերանուանուեց Կեսարիա:

Առաւել բարդ է հարաւային սահմանի հարցը: Ինչպէս նշեցինք վերեւում, այն երկրի ամենաեռուն հատուածն էր: 296-297 թթ. պարսկա-հռոմէական պատերազմի աւարտից յետոյ ստորագրուեց Մծբինի 40-ամեայ հաշտութեան պայմանագիրը, որի մասին առաւել մանրամասն վկայում է Զ. դ. բիւզանդացի պատմիչ Պետրոս Պատրիկիոսը. «Արդ՝ դեսպանութեան առաջադրած գլխաւոր կէտերը հետեւեալներն էին. Արեւելեան երկրամասում հռոմէացիներին են պատկանելու Անգեղ տունը, Ծոփքը եւ Աղձնիքը, Կորդուքի եւ Մաւդէքի հետ միասին. Հայաստանի սահմանը լինելու էր Զինթա ամրոցը, որը գտնւում է Մարաստանի սահմանում: Վիրքի թագաւորը իր թագաւորական նշանները պէտք է ստանայ հռոմէացիներից»[16]: Եթէ վերոյիշեալ հինգ անդրտիգրիսեան երկրամասերի հետ կապուած հարցերը պարզ են[17], ապա խիստ դժուար եւ անորոշ է Զինթայի խնդիրը: Մեր կարծիքով՝ այդ կապակցութեամբ կարելի է տալ միայն ենթադրութիւններ, բայց անհնարին է հաստատապէս որեւէ միտք պնդելը: Խօսքը վերաբերում է Զինթայի տեղադրութեանը, որը Ս. Երեմեանը լուծում է խիստ «պարզ եւ հասարակ»: Ինչպէս դիպուկ նկատում է Բ. Յարութիւնեանը, Պատրիկիոսը հինգ երկրամասերը թուարկել է արեւմուտքից արեւելք[18], որի պարագայում Զինթան պէտք է գտնուէր ծայր արեւելքում, այսինքն՝ այնտեղ, որտեղ տեղադրում է Ս. Երեմեանը՝ Մարաց Ամուր աշխարհում, իսկ աւելի ստոյգ՝ Մահկերտ տանը (Փոքր Զաբ գետի ակունքներում)[19]: Այստեղ Մարաստանի հետ կապուած պէտք է նկատի ունենալ կա՛մ բուն Մարաստանը, որը ներկայիս Իրանի հիւսիս-արեւմուտքում էր, կա՛մ մեծ Մարաստանը, այն է՝ Մարական աշխարհակալ կայսրութիւնը՝ Վրկանից եւ Պարթեւստանից մինչեւ Փոքր Ասիայի արեւելքում գտնուող Հալիս գետը: Պատրիկիոսին, մեր կարծիքով, ժամանակագրական առումով աւելի մօտ էր Բ տարբերակը, եւ սերունդները նախ պէտք է մոռանային բուն (փոքր) Մարաստանի, ապա միայն կայսրութեան մասին: Ս. Երեմեանը նաեւ աւելացնում է, որ Զինթան նոյն Իզիրտուն է, որը բազմիցս յիշատակւում է ասորեստանեան աղբիւրներում: Նրա համար «սկզբնաղբիւր» է հանդիսանում Յ. Մանանդեանը, որն առաջինն է առաջադրել նման ենթադրութիւն: Իզիրտուն, քաջ յայտնի է, որ եղել է Ման(ն)ա պետութեան մայրաքաղաքը, որի կործանումից յետոյ (մօտ 615-610 թթ. Ք. ա.) նուաճուել է Մարաստանի կողմից: Այս առումով իրաւացի է Ն. Յարութիւնեանը, որը Իզիրտուն եւ Մաննան չի կապում Մարաստանի հետ[20]: Դժուար է գուշակել, թէ ինչպէս Իզիրտուն

16 **Petrus Patricius**, Fragm. 14 (Dindori Historici graeci minores, I), էջ 443: Պայմանագրի վերաբերեալ համառօտ տե՛ս նաեւ **Rufi Festi (Sexti)**, *Breviarum rerum gestarum populi Romani*, ed. Forster, 1874, XIV, Eutropii Breviarum historiae Romanae rec. Fr. Ruehl, Lipsiae, 1897, IX, 24-25, **Aurelii Victoris**, *Liber de Caesaribus*, rec. F. Pichimayr, Lipsiae, 1911, XXXIX, 33-37

17 **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի ... վարչաքաղաքական կացութիւնը*, էջ 79-94: Այս խնդիրը մանրամասն քննարկուել է նաեւ մեր կողմից (տե՛ս **Յ. Ժ. Յարութիւնեան**, *Հայաստանի հարաւային երկրամասերը IV դարում*,- «Հասկ» հայագիտական տարեգիրք, Անթիլիաս, 1997, էջ 111-123):

18 **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի ... վարչաքաղաքական կացութիւնը*, էջ 83

19 Տե՛ս **Ս. Տ. Երեմեան**, ՆՀ. աշխ, էջ 52, ինչպէս նաեւ՝ նրա կողմից հրատարակուած բազմաթիւ քարտէզները:

20 **Հ. Բ. Արտեանյան**, *Топонимика Урарту*, Ер., 1985, с. 87

© National Library of Armenia

կարող է կերպարանափոխուել Զինթայի, բայց այժմ ստոյգ պարզ է, որ նրանք չունեն եւ ոչ մի կապ Մարաստանի հետ:

Փաւստոսը Մահկերտ տունը յիշատակում է մէկ անգամ: Նա վկայում է, թէ ինչպէս այն ապստամբել է շատերի նման օրինազանցների այդ շարքն ունի այսպիսի տեսք եւ յաջորդականութիւն՝ Աղձնիք, Նոշիրական, Մահկերտուն, Նիհորական, Դասընտէ եւ վերջում կրկին Աղձնիք[21]: Ինչպէս տեսնում ենք, ցանկն ունի խիստ խառնաշփոթ, յախուռն տեսք, եթէ հարցին մօտենում ենք պատմաաշխարհագրական տեսանկիւնից: Կարելի է ենթադրել, որ պատմիչը հետեւել է իրադարձութիւնների ժամանակագրական յաջորդականութեանը: Նոյն իրավիճակն է նաեւ, երբ մեր պատմիչը նկարագրում է այդ ապստամբութիւնների ճնշումը Մուշեղ սպարապետի կողմից, որտեղ արդէն խօսւում է ոչ թէ առանձին Մահկերտան, այլ նաեւ մարերի (Մարաց Ամուր աշխարհի) մասին: Այս ցանկը եւս ունի խառնաշփոթ տեսք: Տարածքների յաջորդականութիւնն այսպիսին է՝ Նոշիրական, Կորդուք, Կորդրիք, Տմորիք, մարեր, Արցախ, աղուաններ...[22]:

Իր բազմաթիւ քարտէզներում Ս. Երեմեանը ողջ Մարաց աշխարհը պատկերում է Մեծ Հայքից դուրս՝ այն դիտարկելով որպէս կախեալ տարածք կամ պետութիւն: Ինչ վերաբերում է Պատրիկիոսին, ապա նա մատնանշում է, որ «...Հայաստանի սահմանն է լինելու (ընդգծումը մերն է - Յ. Յ.)» Զինթան, եւ ոչ թէ ինչ-որ կախեալ տարածք: Բացի այդ, պատմիչը չի նշում, թէ կոնկրետ հարաւային սահմանի որ հատուածի մասին է խօսքը, իսկ Ս. Երեմեանը «գտնում» է, որ դա վերաբերում է հարաւարեւելքին: Նոյն յաջողութեամբ, սակայն, դա կարելի է վերագրել հարաւային սահմանի իւրաքանչիւր հատուածի, քանզի հայկական լեռնաշխարհի ողջ հարաւային սահմանի երկայնքով (Ուրմիա լճից սկսած) նախկինում գոյութիւն է ունեցել Մարական կայսրութիւնը (Է.-Զ. դդ. Ք. ա.): Ք. յ. Դ. դ. Մեծ Հայքի սահմանը հարաւում հասել է մինչեւ հիւսիսային լայնութեան 37^{0}-ի զուգահեռականը: Հարաւարեւելքում այդ շրջանում է գտնուել Պարսկահայք նահանգի Արասխ (Ոլեա) գաւառը, իսկ հարաւի կենտրոնում՝ Կորճայքում, տեղակայուած են եղել Ներքին եւ Միջին Կորդրիք գաւառները:

Իրավիճակն այլ է, երբ զննում ենք «Հայաստանի պատմութեան ատլասը», որտեղ Նոր Շիրականի բդեշխութեան տարածքի մէջ է նաեւ Մահկերտ տունը, իսկ Ուրմիա լճի հարաւային եւ արեւելեան ափերով ձգւում են Արշակունի արքաների ձեռական կալուածքները: Ինչ վերաբերում է Զինթային, ապա այն ատլասում իրաւացիօրէն բացակայում է[23]: Սա աւելի մօտ է իրականութեանը, քանզի Պատրիկիոսի վկայութիւնն այդ ամրոցի կապակցութեամբ խիստ յեղյեղուկ է: Եթէ Մարաց Ամուր աշխարհը համարուէր կախեալ տարածք, ապա ապստամբութեան դէպքում, Հայոց արքայից զատ, այնտեղ կարող էր բանակ ուղարկել նաեւ մէկ ուրիշը (կարեւոր չէ՝ կառավարիչ, թէ արքայ), որը տեղի չի ունեցել: Աւելին, Փաւստոսը յայտնում է մեր այս վերջին, թէական ենթադրութեանը հակասող տեղեկութիւն: Ըստ նրա՝ Արշակ Բ-ի դէմ ապստամբած Նոր Շիրականի, Մահկերտ տան, Նիհորականի, Դասընտէի եւ այլ տարածքների կառավարիչներն իրենց անկախ հռչակելուց յետոյ հէնց իրենք են դիմել պարսից Շապուհ Բ-ին՝ ակնկալելով օգնութիւն նրանից եւ «...պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զո-

21 Տե՛ս Փաւստոս, Դ, ծ

22 Նոյն տեղում, Ե, թ-ժթ

23 Տե՛ս Բ. Յ. Յարութիւնեան, *Հայաստանի պատմութեան ատլաս*, մաս Ա, Եր., 2004, էջ 44-45-ի քարտէզը (Է, 4)

բայն կոչեն, զրունս դնէին, զատուցին զիւրեանց աշխարհ ի Հայոց»[24]:

Արշակունեաց պետականութեան հետագայ քաղաքական զարգացման ընթացքում, չնայած կատարուած մակընթացութիւններին եւ տեղատուութիւններին, որոնք տեղի էին ունենում 338 թ. սկսած (Մծբինի 40-ամեայ պայմանագրի ժամկէտի աւարտից յետոյ), այնուհանդերձ, պետութեան սահմանները մնացին անփոփոխ: Մենք վերեւում կանգ առանք Պապի կառավարման ընթացքում կատարուած իրադարձութիւնների վրայ, բայց նոյնպիսի ընդվզումներ տեղի էին ունեցել նաեւ նախկինում՝ խոսրով Գ-ի, Տիրանի եւ Արշակի օրօք, որոնց մասին խօսեցինք վերեւում:

Սակայն 363 թ. կատարուած դէպքերը Մերձաւոր արեւելքում շրջադարձային նշանակութիւն ունեցան հայոց պետականութեան զարգացման ապագայ ընթացքի համար: Այս մասին վկայում է Փաւստոսը, որին գալիս է լրացնելու Ամմիանոսը: Համաձայն վերջինիս՝ 363 թ. Յուլիանոս կայսեր անյաջող արեւելեան արշաւանքից յետոյ, որի ժամանակ զոհուեց նաեւ վերջինս, նոր կայսր հռչակուած Յովիանոսը (363-364 թթ.) պարսիկների հետ կնքեց հաշտութեան պայմանագիր, որն Ամմիանոսը կոչում է «ամօթալի»: Նա վկայում է. «Թագաւորը (խօսքը Շապուհ Բ-ի մասին է - Յ. Յ.) յամառօրէն պահանջում էր, որ իրեն վերադարձնեն, ինչպէս նա էր ասում, այն իր երկրները, որ իրենից խլել էր Մաքսիմիանոսը, եւ պահանջում էր, ինչպէս բանակցութիւնների ընթացքում իրօք պարզուեց, մեր ազատման համար իբրեւ փրկանք հինգ գաւառներ Տիգրիսի միւս կողմում՝ Աղձնիքը (Arzanene), Մոկքը (Moxoene), Ծաւդէքը (Zabdicene), նաեւ Ռէհիմենէն (Ռեհիմենէ, Rehimena) ու Կորդուքը (Corduene), հանդերձ 15 ամրոցներով, իսկ բացի այդ, Մծբինը, Սինգարան ու Կաստրա-Մաւրորումը, որն իր դիրքի պատճառով խիստ կարեւոր ամրութիւն էր»[25]:

Պայմանագրի մասին վկայում է նաեւ Փաւստոսը. «Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՄծբին քաղաք՝ որ է յԱրուեստանի եւ զՄիջագետս Ասորոց, եւ մէջաշխարհին Հայոց ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա»[26]: Այստեղ Փաւստոսը, ըստ էութեան, լրացնում է Ամմիանոսի հաղորդած տեղեկութիւնը հինգ նահանգներից բացի կայսրը ձեռք բերում նաեւ մնացեալ Հայաստանի [illegible] Ըստ էութեան, երկու պատմիչների [illegible]թիւնները համարեա թէ միանշանակ [illegible], բայց Փաւստոսը աւելի յստակօրէն է շարադրում: Այսպիսով, Սասանեան Պարսկաստանը Հայաստանի նկատմամբ ձեռքբերի ազատութիւն էր ստանում, իսկ ցանկութեան դէպքում՝ այն իւրացնելու հնարաւորութիւն: Որտեղի՞ց է այս լրացումը Փաւստոսի մօտ. փաստի հիման վրայ է, թէ՞ սոսկ տրամաբանական եզրակացութիւն: Ամենայն հաւանականութեամբ, այս տհաճ փաստը միտումնաւոր կերպով լռութեան է մատնուել Ամմիանոսի կողմից կամ, ծայրայեղ դէպքում, աննկատ մնացել մեզ անյայտ պատճառներով: Հետագայ իր շարադրանքում Փաւստոսը, ի տարբերութիւն Ամմիանոսի, անուղղակիօրէն ցոյց է տալիս, որ 363 թ. «ամօթալի» պայմանագիրը մնացել է թղթի վրայ, եւ Արշակունեաց Հայաստանը տարածքային ոչ մի

24 Փաւստոս, Դ, ծ

25 Amm. Marc, XXV , 7, 9

26 Փաւստոս, Դ, իա

© National Library of Armenia

փոփոխութիւն չի կրել: Դժբախտաբար, կատարուածի մասին ոչինչ չի վկայում Խորենացին, քանզի նրա մօտ առկայ է թիւրիմացութիւն կամ ժամանակավրէպութիւն, որովհետեւ Պատմահայրը Յուլիանոսին համարում է մեր Տիրանի (338-350 թթ.) ժամանակակիցը:

Նախորդ ուսումնասիրողները՝ Կ. Գիւտերբոգը, Հ. Հիւբշմանը, Հ. Աստուրեանը, Յ. Մանանդեանը, Ն. Ադոնցը, վերոյիշեալ Անդրտիգրիսեան հինգ նահանգների իրաւաքաղաքական եւ վարչական խնդիրների ուսումնասիրութեան ասպարէզում «տուրք» են տուել սխալ եզրայանգումների՝ գտնելով, որ դրանք 298-363 թթ. հանդիսացել են սատրապութիւններ, իսկ 363 թ. կրկին անցել Սասանեաններին[27]: Առաջին անգամ այս թիւրիմացութիւնն ու սխալը գիտականօրէն հերքուել է Բ. Յարութիւնեանի կողմից վերոյիշեալ յօդուածում[28], որտեղ հեղինակն անդրադառնում է նրանց կարգավիճակին Գ-Դ. դդ. սահմանագլխին: Հետագայում Դ. դ. Անդրտիգրիսեան երկրամասերին առնչուող խնդիրները վերլուծուել են մեր կողմից, եւ ապացուցուել է, որ դրանք ոչ մի կապ կայսրութեան, իսկ առաւել եւս Պարսկաստանի հետ չեն ունեցել[29]: Եթէ այդպէս չլինէր, ապա Մծբինի պայմանագրից կարճ ժամանակ անց, երբ քրիստոնէութիւնն ընդունւում էր Հայաստանում, Ագաթանգեղոսը երբեք չէր գրի. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչեւ ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն: Ի Սատաղացւոց քաղաքէն մինչեւ առ աշխարհաւն Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչեւ ի դրունս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. եւ յԱմդացւոց քաղաքէն մինչեւ առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն, եւ առ Կորդուօք մինչեւ յամուր աշխարհն Մարաց, մինչեւ առ տամբն Մահքր տան իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»[30]:

Հարաւային սահմանների կապակցութեամբ մեզ մնում է անդրադառնալ մէկ կնճռոտ հարցի եւս: Երբ այս ուղղութեամբ արեւելքից տեղափոխւում ենք արեւմուտք, ապա վիճարկելի է մնում Ծաւդէքի խնդիրը: Երբ Ագաթանգեղոսը խօսում է Գրիգոր Լուսաւորչին կաթողիկոս ձեռնադրելու կապակցութեամբ Կեսարիա մեկնած պատուիրակութեան մասին, ապա նշում է. «...առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ. երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակալ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին, եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին. ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն. իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին. մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց

27 Կ. Գիւտերբոգ, *Հռոմէական Հայաստան եւ Հռոմէական սատրապութիւնները Դ-Զ դարերում*, թարգ. Մ. Նորշուանի, Վիեննա. 1914, էջ 7-8. Հ. Հիւբշման, նշ. աշխ., passim. Յ. Աստուրեան, *Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմայ, 190էն մ. Ք. մինչեւ 428 յ. Ք*, Վենետիկ, 1912, էջ 261-262. Յ. Մանանդեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 115-116. Ն. Ադոնց, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի*, թարգ. Ա. Թ. Խոնդկարեանի եւ Հ. Խոնդկարեանի, Եր., 1987, էջ 55

28 Բ. Յ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի ... վարչաքաղաքական կացութիւնը*, էջ 79-93

29 Յ. Ժ. Յարութիւնեան, *Հայաստանի հարաւային երկրամասերը*, էջ 111-120

30 Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփխիս, 1909, 842, ՃԻ գլուխ

աշխարհին. երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին. երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին. չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ եւ Հեր գաւառի. հնգետասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն. վեչտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց»[31]: Այս շարքում 12-րդ տեղում յիշատակուած Ծաւդէքը չունի եւ ոչ մի կապ հարաւ-արեւմուտքում գտնուող Ծաւդէքի հետ, քանզի առաջին Ծաւդէքի կողքին 11-րդ տեղում նշուած են Սիւնեաց, իսկ 13-րդում՝ Ուտիացւոց իշխանները: Ագաթանգեղոսը տուեալ դէպքում անվիճելիօրէն նկատի ունի Արցախը: Երկու Ծաւդէքների գոյութեան վերաբերեալ միտքն արտացոլուած է նաեւ Ե դ. մատենագիր Եղիշէի մօտ: Վերջինս, երբ անդրադառնում է Յազկերտ Բ-ի՝ Հայաստան առաքած հրովարտակին, առաջին Ծաւդէքին զուգահեռ յիշատակում է Վրաց, Աղուանից, Լփնաց աշխարհները, իսկ երկրորդ դէպքում՝ «...ի սահմանս Տաճկաստանի եւ ի Հոռոմոց աշխարհն եւ ի Կորդուաց եւ ի Դասն եւ ի Ծաւդէ եւ յԱրզնարզիւն...»[32]: Ծաւդէքի հարցը քննարկել են ակադ. Յ. Մանանդեանը եւ Ս. Երեմեանը: Յ. Մանանդեանը, երբ անդրադառնում է Արշակունեաց Հայաստանի սահմաններին Տրդատ Մեծից մինչեւ 363 թ. ընկած ժամանակահատուածում, ապա իրաւացիօրէն գրում է. «Հայաստանի ծայրաշխարհներն էին այստեղ (Տիգրիսի աջ կողմում - Յ. Յ.), ինչպէս կարելի է եզրակացնել Ագաթանգեղոսի, Փաւստոսի ու Զօրանամակի վկայութիւններից՝ «Ծաւդէից աշխարհը, Աղձնիքը եւ Մեծ Ծոփքը, յատկապէս, այժմեան Մարդինից մի քանի կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Արշակունեաց թագաւորների Բնաբեղ բերդը, որի մէջ պահւում էին արքունի գանձերը»[33]: Այս Բնաբեղը գուցէ չպէտք է շփոթել Ծաւդէքի Բնաբեղի հետ: Առաջինը գտնւում էր Մեծ Ծոփքում, որտեղ պահւում էր արքունական գանձերի մի մասը[34], իսկ երկրորդը գտնւում էր Ծաւդէքում եւ այժմ յայտնի է Բենաբիլ գիւղ անունով: Ինչ վերաբերում է Ս. Երեմեանին, ապա վերջինս «Հայ ժողովրդի պատմութեան» ակադեմիական հրատարակութեան 2-րդ հատորին կցուած ներդիր քարտէզում, որը կոչւում է «Մեծ Հայքի թագաւորութիւնը Դ. դ. (298-385 թթ.)», ոչ լրիւ հիմնաւորուած, Ծաւդէքը, Արուաստանը եւ յարակից շրջանները դուրս է թողել Մեծ Հայքի թագաւորութեան տարածքից՝ դրանք ուղղակի անուանելով «այլ թագաւորութիւններ»[35]: Բայց անակնկալները սրանցով չեն աւարտւում, քանզի նոյն գրքի «Մեծ Հայքն ըստ «Աշխարհացոյց»-ի քարտէզում Ծաւդէքը հիւսիսում եւ արեւելքում Մեծ Հայքից անջատուած է պետական սահմանով, իսկ հարաւում եւ արեւմուտքում ունի այնպիսի սահմաններ, ինչպիսին ունեն երկրի ներսում իրարից բաժանուած գաւառները (դրանք հեղինակը որակել է որպէս կախեալ տարածք): Ս. Երեմեանը գտնում է, որ Ք. յ. 37 թ. Ծաւդէքը միացուել է Պարթեւստանին եւ գտնուել է Հայոց Միջագետքի կազմում՝ կոչուելով Տուր-Աբդին (ըստ նրա՝ Հայոց Միջագետքում են եղել նաեւ Արուաստանը եւ Ծոփքը)[36]: Անհնար է, որ Պետրոս Պատրիկիոսը Մծբինի պայմանագրում նկատի ունենար

31 Նոյն տեղում, 795, ՃԺԲ գլուխ

32 Եղիշէի վարդապետի *Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին*. տե՛ս նաեւ Б. А. Арутюнян, *Административное деление Закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елише*,- "Кавказ и Византия", вып. I, Ереван, 1979, с. 25

33 Յ. Մանանդեան, նշ. աշխ, էջ 310

34 Փաւստոս, Ե, Է

35 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, *Հայաստանը վաղ ֆէոդալիզմի ժամանակաշրջանում*, խմբ. Ս. Տ. Երեմեանի, Երեւան, 1984 (ներդիր քարտէզը)

36 Տե՛ս Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 66, 69, 71, 118

© National Library of Armenia

արեւելքում գտնուող Մաւդէքը, որն ընդհանրապէս զերծ է մնացել այդ ժամանակ (296-297 թթ.) տեղի ունեցած քաղաքական անցուդարձից: Պատրիկիոսեան Մաւդէքին է անդրադառնում նաեւ Ամմիանոսը՝ 363 թ. հաշտութեան պայմանագրի կապակցութեամբ, իսկ ագաթանգեղոսեանը արեւելեան Մաւդէքն է: Պատկերն աւելի պարզեցնելու համար երեք մատենագիրների վկայութիւնները ներկայացնենք ըստ նրանց ցանկերի՝ հետեւեալ (թէկուզ եւ ոչ ժամանակագրական) յաջորդականութեամբ՝ Պատրիկիոս, Ագաթանգեղոս, Ամմիանոս.

Պատրիկիոս	Ագաթանգեղոս	Ամմիանոս
Ինգելենէ	Անգեղ տան իշխան (1)	
Մոփք	Մոփքի իշխան (7)	
Աղձնիք	Աղձնեաց իշխան (մեծ բդեշխ - 2)	Աղձնիք
Կորդուք	Կորդուաց իշխան (6)	Կորդուք (5)
Մաւդէք		Մաւդէք (3)
	Մոկաց իշխան (10)	Մոկք (2)
		Ռե(հ)իմենէ (4)
	Մաւդէից իշխան (խօսքն արեւելեան Մաւդէքի մասին է) (12)	

Այս ցանկերը պարզորոշ ցոյց են տալիս բոլոր նմանութիւններն ու տարբերութիւնները, որոնք առկայ են նրանց վկայութիւններում: Պատրիկիոսի եւ Ամմիանոսի մօտ հինգից համընկնում են երեքը՝ Աղձնիքը, Կորդուքը եւ Մաւդէքը: Որ Շապուհ Բ-ն 363 թ. հետ է պահանջել հէնց դրանք (ինչպէս նաեւ հարաւի կենտրոնում գտնուող Մոկքը եւ Ռէիմենէն), խօսում է նրա մօտակայ նպատակների մասին՝ հարաւից երկատել Հայաստանը եւ Հռոմին թողնել նրա արեւմտեան փոքրիկ հատուածը: Դա կատարուեց աւելի ուշ՝ 387 թ:

Այսպիսով, 298 թ. սկսած Արշակունեաց Հայաստանի տարածքը վարչականօրէն մնացել է անփոփոխ: Նոյնպիսի իրավիճակ շարունակել է գոյութիւն ունենալ նաեւ 363 թ. «ամօթալի» պայմանագրից յետոյ, որով կայսրութիւնը Սասանեաններին է զիջել հինգ հայկական նահանգ: Պայմանագիրը Արշակի կողմից համարուել է ապօրինի, ինչը եւ իր կիզակէտին է հասցրել պարսկա-հայկական (Շապուհ-Արշակ Բ) փոխյարաբերութիւնների լարուածութիւնը եւ հանդիսացել է վերջինիս ձերբակալութեան ու մահուան հիմնական դրդապատճառներից մէկը: Մէջտեղից վերացնելով Հայոց արքային՝ Շապուհը կարծում էր, թէ կը կարողանայ կենսագործել իր ծրագիրը՝ զաւթել անդրտիգրիսեան նահանգները, սակայն անօգուտ:

Եթէ 363 թ. պայմանագիրը կենսագործուէր, ապա Շապուհի համար լիովին անիմաստ էր պարսկա-հայկական Քառամեայ պատերազմի (364-368 թթ.) սանձազերծումը, իսկ դրանից յետոյ ամբողջական Մեծ Հայքի գահին չէին բազմի Պապը, Վարազդատը եւ Արշակ Գ-ն: Որ Շապուհն իսկապէս մտադրուել էր նուաճել Հայաստանը, ինչպէս նշեցինք վերեւում, պարզորոշ երեւում էր «ամօթալի» պայմանագրի այն հատուածից, ուր Փաւստոսը գրում էր. «... մէջաշխարհին Հայոց ձեռնթափ եմ...»: Երբ համեմատում ենք Փաւստոսի եւ Ամմիանոսի երկերը, առաջին հայեացքից թւում է, թէ վերջինս աւելի հանգամանալից է շարադրում իրադրութիւնը, բայց մեր մատենագիրն առաւել իրատեսորէն է բացայայտում, թէ ինչ էր սպասւում Արշակունիներին մօտ կամ հեռաւոր ապագայում:

Ողջ շարադրանքի ընթացքում մենք կատարեցինք մէկ միտումնաւոր բացթողում՝ ոչինչ չասելով Մոկքի վերաբերեալ: Դա պարզապէս անիմաստ էր, քանզի, ինչպէս ցոյց տրուեց մեր վերլուծութեան ողջ ընթացքում, Դ. դարում Մաւդէքը մշտապէս հանդիսացել է Արշակունեաց Հայաստանի անբաժանելի մաս: Մոկքը հարաւից սահմանակից էր վերջինիս եւ Կորդուքին, այսինքն, թերեւս, չէր կարող ունենալ արտաքին սահման (թէպէտ «Աշխարհացոյց»-ում այդպէս վկայուած է): Հէնց այս պատճառով էլ Մոկքի խնդրի քննարկումը դառնում է անիմաստ: Ինչ վերաբերում է Ամմիանոսի յիշատակած Ռէիմենէին, ապա նրա տեղադրութիւնը կարօտ է առանձին ուսումնասիրութեան, քանզի աղբիւրների վկայութիւնները նրա մասին խիստ սակաւ են եւ կցկտուր: Ամենայն հաւանականութեամբ, ամմիանոսեան Ռէիմենէն համապատասխանում է Փաւստոս Բուզանդի Արուաստանին, որը գտնւում է Կորդուքից հարաւ-արեւմուտք եւ Մաւդէքից հարաւ (համաձայն Ս. Երեմեանի)[37]: Ըստ Բ. Յարութիւնեանի՝ այն պէտք է գտնուէր Աղձնեաց բդեշխութիւնից հարաւ-արեւմուտք եւ Մաւդէքից հարաւ, բայց, այս անգամ եւս ցուցաբերելով գիտական պարտաճանաչութիւն, հեղինակը Ռէիմենէի դիմաց դրել է հարցական նշան (?)[38]:

Այսպիսով, ըստ Փաւստոս Բուզանդի, Արշակունեաց Հայաստանի հարաւային սահմաններն արեւելքից արեւմուտք ձգուել են Մահկերտուն, Նիհորական, Նոր Շիրական, Դասն, Կորդուք, Մաւդէք Ռէիմենէ(?), Մեծ Մոփք, Անգեղ տուն երկրամասերի վրայով: Այս սահմանագիծը պահպանուել է մինչեւ 387 թ. Մեծ Հայքի թագաւորութեան առաջին բաժանումը:

37 Տե՛ս նոյն տեղում

38 Բ. Յ. Յարութիւնեան, *Հայաստանի պատմութեան ատլաս*, էջ 44-45 (4 Ե)

© National Library of Armenia